<< Աբովյանի կրթահամալիր>> ՊՈԱԿ-ի 9-րդ Գ դասարանի դասղեկի

Հաշվետվություն

2021-2022 ուստարվա սկզբում 9-րդ Գ դասարանում սովորել է 24 աշակերտ՝ 6աղջիկ , 18 տղա ,իսկ տարեվերջին 23 աշակերտ՝ 6 աղջիկ , 17 տղա: Դասարանում սովորում է ԿԱՊԿՈՒ 1 աշակերտ՝ Քերիմյան Արման : Դասարանում կարգապահությունը ,առաջադիմությունը և հիգիենան պահելու նպատակով մշտապես ունեցել եմ զրույցներ, դասղեկի ժամերը օգտագործվել են նպատակային , մշտապես պահվել է ծնող – ուսուցիչ կապը : Անհատական զրույցներ եմ ունեցել հաճախակի բացակայող ,ուսման մեջ թերացող աշակերտների ,ինչպես նաև նրանց ծնողների հետ: Ծնողական ժողովները հրավիրվել և անց են կացվել ըստ ժամանակացույցի , նախապես կազմված օրակարգի համաձայն: Յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը անց ենք կացրել ծնող-ուսուցիչ հանդիպումներ, առկա խնդիրները վեր հանելու և լուծելու համար: Դասարանի աշակերտները ակտիվ մասնակցել են դպրոցական միջոցառումներին , մրցույթներին և առարկայական օլիմպիադաներին:

Ունեցել ենք հաջողություններ քաղաքային և մարզային օլիմպիադաներում՝ <<Հայոց լեզու և գրականություն>>առարկաներից:

Առաջին կիսամյակի վերջում ունեցել եմ մեկ աշակերտ՝ Մարտիրոսյան Էրիկը ,ով ՌԴ մեկնելու պատճառով դուրս է եկել դպրոցից: Տարեվերջին 5 աշակերտներ ունեցել են 120-200 ժամ բացակայություն:Նրանք կարգին համապատասխան հանձնել են քննություններ <<Հայոց լեզու և գրականություն>> և <<Մաթեմատիկա>>առարկաներից ,իսկ մյուս բոլոր առարկաներից հանձնել են ստուգողական աշխատանքներ: Տարեվերջին ամփոփվել են երկրորդ կիսամյակի և տարեկան գնահատականները : Ըստ տարեկան գնահատականների դասարանում 23 աշակերտներից 3 ը հարվածային սովորողներ են ,իսկ մյուսները միջակ: Դասարանի հետ կազմակերպել եմ <<Վերջին դաս>> միջոցառում, որտեղ ընդգրկված են եղել բոլոր 23 աշակերտները:Նախատեսվում է ավարտական քննություններից հետո կազմակերպել էքսկուրսիա կամ ավարտական երեկո :

9-րդ Գ դասարանի դասղեկ Գոհար Գասպարյան / /